

## Տեղեկատվություն

<<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի 2015 թվականի դեկտեմբեր ամսվա կատարված աշխատանքների

Դեկտեմբեր ամսին պահպանության բաժնի աշխատակիցների կողմից <<Դիլիջան>> ազգային պարկի տարածքում հայտնաբերվել է ապօրինի հատված 6 ծառ, որոնց համար կազմվել է 4 անտառխախտման արձանագրություն և ուղարկվել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին: Կազմվել են տարեկան հաշվետվությունները, բաժնի 2016 թվականի աշխատանքային պլան-ծրագիրը:

Դեկտեմբեր ամսին գիտական բաժնի աշխատակիցների կողմից <<Դիլիջան>> ազգային պարկ>> պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների համար անց են կացվել <<Դիլիջան>> ազգային պարկի ուտելի և թունավոր սնկերը>>, <<Դիլիջան>> ազգային պարկի էկոհամակարգերի վրա ազդող գործոնները>>, <<Դիլիջան>> ազգային պարկում գտնվող ֆաունայի տեսակները և նրանց սպառնացող ընդհանուր վտանգները>> վերնագրերով դասընթացներ, կազմվել է 2015 թվականի տարեկան հաշվետվությունը, մշակվել է գիտության բաժնի 2016 թվականի աշխատանքային պլան-ծրագիրը:

Դեկտեմբեր ամսին էկոտուրիզմի և ռեկրեացիայի բաժնի կողմից իրականացվել են 2015 թվականի տարեկան հաշվետվության կազմման աշխատանքները, մշակվել է 2016 թվականի աշխատանքների պլան- ծրագիրը: